ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 12

ԵՊՀ ԻՄ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08. 07. 2022թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին Գ. Ավետիսյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ն. Բեգինյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյան, քարտուղար՝ Ա. Ալեքսանյան:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
2. Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվության մասին /զեկ. Ա. Մարգարյան/:
3. Ընթացիկ հարցեր:

   3.1. Մ. Վ. Միքայելյանի և Գ. Մ. Միքայելյանի «Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների կարգավորումը» (ուսումնամեթոդական աշխատանք) հրատարակության երաշխավորելու մասին:

Բաց քվեարկությամբ՝ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

- Հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին.- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին ֆակուլտետի առկա ուսուցման համակարգում մասնակցել է 130 /նախորդ տարի՝ 114/ ուսանող. «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ կրթական ծրագրով՝ 73 /նախորդ տարի ևս 73/ ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով՝ 57 /նախորդ տարի 41/ ուսանող: Քննաշրջանին դրական միավորներ է ստացել 94 /նախորդ տարի 94/ ուսանող, ընդ որում 6 /նախորդ տարի 12/ ուսանող ստացել է միայն գերազանց գնահատական /«Ֆինանսներ» ԿԾ-ով 8 /նախորդ տարի՝ 4/, «Զբոսաշրջություն» ԿԾ-ով 4 /նախորդ տարի՝ 2/ ուսանող: Ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմել է 72,3% /նախորդ տարվա համեմատ մոտ 10%-ով նվազել է՝ 82,46%/, /Ֆինանսներ՝ 78,1%, նախորդ 82,19% փոխարեն, Զբոսաշրջություն՝ 64,9%, նախորդ 82,93%-ի փոխարեն/: Անբավարար գնահատականներ է ստացել 36 ուսանող /նախորդ տարի՝ 20/ «Ֆինանսներ» ԿԾ՝ 16, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 20 ուսանող/: Անվճար ուսուցման համակարգով սովորում է 32 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ՝ 20, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 12 ուսանող/, որոնց բացարձակ առաջադիմությունը կազմում է 87,5%, նախորդ տարվա 100%-ի փոխարեն: Ֆակուլտետում վճարովի ուսուցման համակարգով սովորում է 98 ուսանող, նախորդ 79-ի փոխարեն /«Ֆինանսներ» ԿԾ՝ 53, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 45 ուսանող/, նրանցից քննաշրջանը հաղթահարել է 66-ը, նախորդ տարվա 59-ի փոխարեն /«Ֆինանսներ» ԿԾ՝ 37, «Զբոսաշրջություն» ԿԾ 29՝ ուսանող/, վճարովի ուսուցման համակարգով սովորողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 67,3%, նախորդ տարվա 74,68%-ի համեմատությամբ: Վերը նշված թվային ցուցանիշներից երևում է, որ առաջադիմության նվազման հիմնական պատճառը «Զբոսաշրջություն» ԿԾ-ի ուսանողների առաջադիմության անկումն է, որը մանրամասն քննարկման անհրաժեշտություն ունի մեր և հատկապես համապատասխան ամբիոնի կողմից: Զեկուցողը նշեց նաև, որ մասնաճյուղի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման ընդհանուր

առաջադիմությունը առկա համակարգի առաջինից երրորդ կուրսերի համար կազմել է 75,5%, ֆակուլտետինը՝ 68,4%, ինչը պարզ է դարձնում, որ ֆակուլտետի առաջադիմությունը միջին ցուցանիշից ցածր է 7,1%-ով:

Քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետում, գրավոր բողոքներ չեն արձանագրվել:

Ըստ կուրսերի ամփոփ պատկերը հետևյալն է.

բացարձակ առաջադիմություն		ուսանողների թիվը/անվճար	
I ֆին.-52,6%,	զբ - 52,4%	19/5,	21/3
II ֆին-74,1%,	զբ - 100%	27/4,	14/3
III ֆին - 100%,	զբ -46,2%	17/5,	16/3
IV ֆին - 100%,	զբ -100%,	10/6,	6/3
ընդ		**73/20,**	**57/12**

2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում հեռակա ուսուցման բաժնի լուծարումից հետո ֆակուլտետի ուսանողների շարքերը համալրեց 155 ուսանող, ինչպես նաև կիսամյակի ընթացքում իրենց ուսանողական իրավունքները վերականգնել է 13 ուսանող: 168 ուսանող մասնակցել է քննաշրջանին /ներառյալ հինգերորդ կուրսը/ «Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ կրթական ծրագրով 99 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 69 ուսանող: Քննաշրջանը դրական գնահատականներով է ավարտել 79 ուսանող, ընդ որում միայն գերազանց գնահատականներ ստացել է 4 ուսանող՝ հինգերորդ կուրսում /այլ կուրսերում չեն եղել/, 20 ուսանող ստացել է «լավ» և «գերազանց», 55 ուսանող՝ խառը գնահատականներ: Հեռակա ուսուցման համակարգում բացարձակ առաջադիմությունը կազմել է 47,02% /«Ֆինանսներ»՝ 43,43%, «Զբոսաշրջություն»՝

52,17%/: Անբավարար գնահատականներ ստացել է 89 ուսանող: Զեկուցողը նշեց նաև, որ մասնաճյուղի 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում հեռակա ուսուցման ընդհանուր առաջադիմությունը առաջինից-չորրորդ կուրսերի համար կազմել է 40,4%, ֆակուլտետինը՝ 37,8%, որը միջին ցուցանիշից ցածր է 2,6%-ով: Ա. Մարգարյանը նշեց, որ քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետում, գրաֆիկից գրեթե շեղումներ չեն եղել /փոխվել է լսարան, մեկ դասախոսի հիվանդության պատճառով քննությունը անց է կացվել հանձնաժողովով/: Քննական գործընթացները վերահսկվել են ՈՒՄՎ-ի, ԿԾ ղեկավարների, ամբիոնի վարիչների կողմից: Գրավոր բողոքներ չեն արձանագրվել:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով՝ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին. - Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվության մասին /զեկ. Ա. Մարգարյան/:***

Ներկայացնելով ֆակուլտետի 2021-2022 ուստարվա հաշվետվությունը՝ Ա. Մարգարյանը հայտնեց, որ ֆակուլտետի գործունեության համար հիմք են ծառայել ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագիրը, կանոնադրությունը և Տնտեսագիտության ֆակուլտետի 2021-2022 ուստարվա աշխատանքային պլանը: Ֆակուլտետում գործում են երկու մասնագիտական ամբիոներ՝ Ընդհանուր տնտեսագիտության, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության: Ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը 38 է, որից 5-ը՝ պրոֆեսոր, 9-ը՝ դոցենտ, 14-ը՝ ասիստենտ, 11-ը՝ դասախոս:

Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ պայմանավորված համավարակով և որոշ դասախոսների առողջական վիճակով 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում եղել են դասապրոցեսներ, որոնք իրականացվել են հեռավար կամ հիբրիդային տարբերակով, իսկ քննական գործընթացները իրականացվել են առկա տարբերակով:

Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են սեմինարներ, դասախոսների շրջանում խորհրդակցություններ և քննարկումներ դասընթացների փաթեթների կազմման, վերանայման, մեր դասախոսները մասնակցել են տարբեր վերապատրաստման «Moodle» էլեկտրոնային հարթակի օգտագործման դասընթացներին, որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ՝ զարգացնելով մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստելով ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:

Ֆակուլտետում արդյունավետ գործում է կրթական ծրագրի ղեկավարների ինստիտուտը: Գործող երկու կրթական ծրագրերի մասնագիտական ամբիոններում իրականացվել է ՀԲ-ով կրթական դասընթացների վերլուծություն: Վերանայվել է ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» ԿԾ-երում դասավանդվող դասընթացների փաթեթներում գնահատման մեթոդները՝ պայմանավորված առկա և հեռավար դասավանդմամբ և գնահատման նոր չափորոշիչներով, որոնք կգործեն առայժմ միայն առաջին կուրսեցիների համար: Դասախոսները և ԿԾ պատասխանատուները հանդիպումներ են կազմակերպել ուսանողների հետ և քննարկել նրանց առաջարկությունները: ԿԾ-ի ղեկավարի կողմից ուսումնասիրվել է գործող ԿԾ վերջնարդյունքների կապը համապատասխան դասընթացների վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ: Վերանայվել է դասավանդվող դասընթացներից յուրաքանչյուրի համար մշակված գնահատման նորմերը և չափանիշները՝ համապատասխանեցնելով դասընթացի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված գնահատման մեթոդներին:

Ֆակուլտետում երկու ամբիոնների կտրվածքով առկա է 38 /I կիս./ և 31 /II կիս./ դասընթացի պորտֆոլիո: Վերանայվում և կազմվում են նոր դասընթացների պորտֆոլիոները (շարունակական գործընթաց): ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ մշակվել է դասընթացի գնահատման հարցաթերթ, որը փորձարկվել է նախորդ տարի և ներառվում է փաթեթներում:

Ֆակուլտետում գործող երկու ամբիոնները հանդես են եկել առաջարկություններով ԿԾ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգի վերանայման ժամանակ: Հաստատված կարգի համապատասխան՝ ֆակուլտետում իրականացվել է գործող կրթական ծրագրերի վերանայման գործընթաց: Ձևավորվել են աշխատանքային խմբեր, հաստատվել են աշխատանքների կատարման ժամանակացույցերը և սահմանված ժամկետներում ԿԲԴՎ բաժին են ներկայացվել վերանայված ԿԾ-երը:

Ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսու-թյունների) գրագողությունը կանխելու նպատակով, իրականացվել են քննարկումներ ուսանողների հետ, ներկայացվել է համապատասխան կարգը: Բոլոր դասընթացների /հետազոտական բաղ. և առանց հետազ. բաղադրիչի/ շրջանակում ուսանողների համար կազմվել են անհատական և խմբային առաջադրանքներ: Ներկայացվել են ավարտական աշխատանքների արդիական, պարտադիր հետազոտական բաղադրիչով, չկրկնվող թեմաներ /«Ֆինանսներ» ԿԾ՝ 17, «Զբոսաշրջություն»՝ 6/: Ավարտական աշխատանքի կարևոր բաղադրիչ է դարձել ուսանողների կողմից լրացվող հայտարարությունը ակադեմիական ազնվության մասին: Գործընթացները կազմակերպվել են գործող կարգերին համապատասխան:

«Ֆինանսներ» /ըստ ոլորտի/ կրթական ծրագիրը իրականացվում է ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի հետ համատեղ: Ուսանողների համար կազմակերպվել է մեկ այց նշված կենտրոն՝ սեմինար-քննարկմանը մասնակցելու նպատակով:

Գործադրվել է ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում, այդ նպատակով.

- քննարկվել են համապատասխան հարցման արդյունքները:
- ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ մշակվել են առանձին դասընթացների վարման արդյունավետությունը գնահատող հարցաթերթեր:
- Իրականացվել են հարցումներ առանձին դասընթացների համար:
- Փոխադարձ դասալսման արդյունքների քննարկում:

ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի կողմից կազմակերպվել են մի շարք առցանց վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ֆակուլտետի դասախոսներ մասնավորապես.

- **«Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում»,**
- **«Moodle-էլեկտրոնային ուսուցման համակարգը բուհերում»,**
- **«Գործաբանական հաղորդակցություն»,**
- **«Աշխատանքային իրավահարաբերություններ, առկա խնդիրներ, աշխատանքային օրենսգրքի փոփոխություններ»,**
- **«Հետազոտական աշխատանքի պլանավորում, իրականացում, ներկայացում»,**
- **«Դասախոսի աշխատանքը ուսանողակենտրոն ուսուցման տեսանկյունից»,**

Ֆակուլտետի դասախոսների 90%-ը մասնակցել է նախորդ տարիներին կազմակերպված վերապատրաստման դասընթացներին և կարողանում են ստեղծել էլեկտրոնային ռեսուրսներ և մատուցել:

Ա. Մարգարյանը նշեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2021-2022 ուստարում առաջին կիսամյակում սովորող ուսանողների թիվը կազմել է 119, որից 36-ը՝ անվճար: 33 ուսանող ստացել է պետական, 3 ուսանող՝ անվանական կրթաթոշակ: Իսկ երկրորդ կիսամյակում ուսանողների թիվը կազմել է 116, որից 36-ը՝ անվճար: 31 ուսանող ստացել է պետական կրթաթոշակ, 2-ը՝ անվանական:

Ա. Մարգարյանը նշեց, որ 2021-2022 ուստարում ֆակուլտետի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար սահմանված ժամկետներում իրականացվել են հետևյալ ընթացիկ գործընթացները.

-կազմվել են դասացուցակը, անհրաժեշտ ժամանակացույցերը,

-ամբիոնները ապահովել են պրակտիկաների ծրագրերի, դասընթացների փաթեթների առկայությունը, ավարտական և կուրսային աշխատանքների ցանկը և դրանց իրականացման գործընթացը,

-ամբիոնային ծանրաբեռնվածության հիման վրա ամբիոնը իրականացրել է 2022-2023 ուստարվա համար անհատական բեռնվածության նախնական բաշխում և քննարկումներ դասախոսների հետ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.4 կետով՝ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. -1. Հավանություն տալ տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային պլանով 2021-2022 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ դեկանի հաշվետվությունը:

2. Տնտեսագիտության ֆակուլտետի 2021-2022 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

3.1. Լսեցին.- Մ. Վ. Միքայելյանի և Գ. Մ. Միքայելյանի «Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումների կարգավորումը» (ուսումնամեթոդական աշխատանք) հրատարակման երաշխավորելու մասին:

Մ. Վ. Միքայելյանի և Գ. Մ. Միքայելյանի «Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների կարգավորումը» ուսումնամեթոդական աշխատանքը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Աշխատանքի նպատակն է տնտեսական մրցակցության պաշտպանության դասընթացն ուսումնասիրող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին, ինչպես նաև այդ բնագավառի պետական կարգավորող մարմնի աշխատակիցներին գիտելիքներ հաղորդել տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումների

կարգավորման վերաբերյալ: Հնարավորություն է տալիս ապրանքային շուկաների վերլուծության և գնահատման միջոցով կարգավորող պետական մարմինը տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման վերաբերյալ թույլատրման կամ արգելման որոշում կայացնել:

Ուսումնամեթոդական աշխատանքում հաշվի են առնվել Եվրամիության և Եվրասիական միության երկրների մրցակցության պաշտպանության օրենքների պահանջները 2014թ. Հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի պահանջները՝ 2022թ. հունվարի 1-ի դրությամբ:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով՝ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Երաշխավորել Մ. Վ. Միքայելյանի և Գ. Մ. Միքայելյանի «Տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումների կարգավորումը» ուսումնամեթոդական աշխատանքը տպագրության:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա.Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***